Գործակալական պայմանագիր բեռնափոխադրումների ծառայություններ մատուցելու համար

Երևան

Այս պայմանագիրը հանդիսանում է հրապարակային առաջարկ, որին իր համաձայնությունը Հաճախորդը տալիս է www.minami.am կայքում գրանցմամբ և «Մինամի» ՍՊԸ-ի ծառայություններից օգտվելու միջոցով:

«Մինամի» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը (այսուհետ՝ Գործակալը), ՀՀ-ում գրանցված և կանոնադրության համապատասխան գործող ընկերություն է, մի կողմից, և մյուս կողմից՝ ծառայություններից օգտվողը (այսուհետ՝ Հաճախորդ), որը հանդիսանում է չափահաս, գործունակ ֆիզիկական անձ, կնքեցին պայմանագիրը հետևյալի մասին:

---

1. Պայմանագրի առարկան

1.1. Այս պայմանագրով Գործակալը պարտավորվում է ըստ կողմերի համաձայնության հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին կատարել գործողություններ՝ պատվերի հիման վրա (այսուհետ՝ Պատվեր), որը արտացոլվում է օնլայն, «Մինամի» ՍՊԸ-ի անձնական էջում, կատարել պատվերի գնում և/կամ կազմակերպել Պատվերի տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն՝ Հաճախորդի կողմից նշված հասցեով:

1.2. Գործակալը ապրանքներ վաճառող չէ, այլ միջնորդական ծառայություններ է մատուցում դրանք ձեռք բերելու և առաքանու կազմակերպման համար:

1.3. Գործակալը չի իրականացնում ապրանքների առաքում այլ տրամադրում է Հաճախորդին միջնորդական ծառայություններ՝ ապրանքների ստացման համար:

1.4. Գործակալը պատասխանատվություն չի կրում Հաճախորդին առաքված ապրանքների անհամապատասխանության կամ թերի լինելու համար:

1.5. Հաճախորդը վճարում է Գործակալին ծառայությունների դիմաց, ինչպես նաև կոմպենսացնում է բոլոր ծախսերը, որոնք կապված են պատվերի իրականացման համար:

1.6. Հաճախորդը պատասխանատու է այն պայմանագրերի համար, որոնք Գործակալը կնքում է երրորդ անձանց հետ այս պայմանագրի շրջանակներում, նաև այն դեպքերում, երբ այդ պայմանագրերում գործարքի անմիջական կողմ է նշված Գործակալը:

---

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. **Գործակալը պարտավորվում է՝**

- Մատուցել բարձրորակ ծառայություններ՝ համաձայն պայմանագրի պայմանների:
- Պահպանել Հաճախորդի անձնական տվյալների գաղտնիությունը, բացառելով այն դեպքերը, որոնք սահմանված են օրենքով:
- Տեղեկացնել Հաճախորդին նրա պատվերի կարգի և առաքման հնարավոր փոփոխությունների մասին:

2.2. **Գործակալն իրավունք ունի՝**

- Փոփոխել առաքման ուղիները և մեթոդները օբյեկտիվ տնտեսական խնդիրների առաջացման դեպքում:
- Վերանայել ծառայությունների գները, եթե փոխվում են տրանսպորտային ընկերությունների գները կամ առաջանում են այլ հանգամանքներ:
- Ստանձնել պատվերը չկատարելու իրավունքը, եթե պատվերը պարունակում է արգելված ապրանքներ կամ կարող է վնաս հասցնել այլ առաքումներին:

2.3. **Հաճախորդը պարտավորվում է՝**

- Տրամադրել ճշգրիտ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են պատվերի կատարման համար:
- Վճարել ծառայությունների դիմաց ամբողջական կանխավճարի տեսքով նախքան ապրանքի առաքումը Գործակալի միջազգային պահեստից:
- Ներկայացնել պահանջներ Գործակալի նկատմամբ պատվերի ուշացման դեպքում եթե պատճառը կապված է այն պայմանների հետ, որոնք կախված չեն Գործակալից:

---

3. Ծառայությունների դիմաց վճարում և ծախսերի կոմպենսացիա

3.1. Գործակալին վճարումը ներառում է «Գնիր իմ փոխարեն» ծառայության ամբողջական արժեքը և պատվերի առաքման ծախսերը:

3.2. Կողմերը համաձայնվում են, որ առաքման վերջնական արժեքը սահմանվում է այն պահին, երբ առաքումը հասնում է Գործակալի կամ նրա գործընկերոջ պահեստ, ինչի մասին, Հաճախորդը կտեղեկացվի սահմանված կարգով:

3.3. Եթե առաքման արժեքը աճում է 5 (հինգ) տոկոս կամ ավել, մինչ ապրանքի առաքումը, Ագենտը իրավունք ունի առաքման ընթացքում իրականացնել վերահաշվարկ:

3.4. Հաճախորդը հաստատում է, որ ծանոթ է Գործակալի կողմից տրամադրվող ծառայությունների գներին և տալիս է իր համաձայնությունը:

3.5 Հաճախորդի պահանջով Գործակալը տրամադրում է միջնորդավճարի մանրամասն հաշվարկ: Հաճախորդը պարտավորվում է փոխհատուցել Գործակալին սույն Պայմանագրի շրջանակներում, վերջինիս կողմից, Հաճախորդի անունից կատարված փաստաթղթերով հաստատված բոլոր ծախսերը:

4. Հատուկ պայմանները

4.1. Բարձր ծանրաբեռնվածության պայմաններում (տոն օրեր, ակցիաներ և այլն) պատվերների մշակման ու առաքման ժամկետները կարող են փոփոխվել:

4.2. Գործակալն իրավունք ունի դադարեցնել ծառայությունների մատուցումը, եթե կասկածներ ունենա Հաճախորդի միջոցների ծագման օրինականության վերաբերյալ:

4.3. Գործակալը պատասխանատվություն չի կրում միջազգային փոխադրման փուլում ապրանքների ուշացման, վնասման կամ կորստի համար, եթե դրանք տեղի են ունեցել երրորդ անձանց մեղքով:

4.4. «Մինամի» ՍՊԸ-ի կայքում ներկայացված ընդհանուր պայմաններն ու կարգավորումները հանդիսանում են այս պայմանագրի անբաժանելի մաս և պարտադիր են կողմերի համար:

4.5. Հաճախորդը հաստատում է սույն Պայմանագրի 4.4 կետում նշված ընդհանուր դրույթներին և պայմաններին ծանոթ լինելու և դրանց հետ լիովին համաձայն լինելու փաստը:

---

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1. Գործակալը պատասխանատվություն կրում է միայն այն պատվերների համար, որոնք ընդունվել են և մշակվել իր արտերկրյա պահեստում:

5.2 Գործակալը չի երաշխավորում առաքման ժամկետները, քանի որ դրանք կախված են երրորդ կողմ փոխադրողներից և մաքսային մարմիններից:

5.3 Վեճերի ծագման դեպքում Կողմերը պարտավորվում են դրանք լուծել բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում վեճը հանձնվում է Հայաստանի Հանրապետության դատարանի քննարկմանը:

5.4. Ֆիզիկական անձ հանդիսացող Հաճախորդը սույնով հայտարարում և երաշխավորում է, որ ունի լիարժեք քաղաքացիական գործունակություն, որը որևէ կերպ սահմանափակված չէ:

---

6. Ժամկետներ և պայմանագրի չեղարկում

6.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հաճախորդի կողմից Գործակալի կայքում գրանցման պահից և գործում է մինչև Կողմերի կողմից իրենց պարտավորությունների լիարժեք կատարումը:

6.2. Գործակալն իրավունք ունի միակողմանիորեն լուծել պայմանագիրը, եթե Հաճախորդը խախտում է պայմանագրի պայմանները կամ օրենսդրության պահանջները:

6.3. Կողմերի միջև բոլոր հաշվարկներն իրականացվում են փաստացի մատուցված ծառայությունների հիման վրա:

---

7. Բացարձակ ուժ (Ֆորս-մաջոր)

7.1. Գործակալը և/կամ Հաճախորդն ազատվում են Պայմանագրով ստանձնած պարտավորությունների լրիվ կամ մասնակի չկատարման պատասխանատվությունից, եթե դա տեղի է ունեցել անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

7.2. Նման իրավիճակներ են, ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ապստամբությունը, ռազմական կամ արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական անկարգությունները, գործադուլները, կապի միջոցների

աշխատանքի դադարեցումը, բեռնափոխադրող տրանսպորտային միջոցների, ինչպես նաև ինքնաթիռների թռիչքների անորոշ ժամկետով չեղարկումը կամ հետաձգումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնար են դարձնում սույն Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:

7.3. Եթե անհաղթահարելի ուժի հանգամանքների գործողությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ նախապես մյուս Կողմին ուղարկելով նման լուծման մասին գրավոր ծանուցում:

8.ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն պայմանագիրը իրենից ներկայացնում է Հաճախորդի կողմից Գործակալին տրված լիազորագիր, որով վերջինս գործում է Հաճախորդի անունից, շահերից և հաշվին, երրորդ անձանցից ապրանքներ ձեռք բերելու, դրանք Հայաստանի Հանրապետություն ներմուծելու, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում պետական մարմիններում Հաճախորդի շահերը ներկայացնելու՝ մաքսային ձևակերպումներ իրականացնելու և Հաճախորդի անունից մաքսային հայտարարագրեր ներկայացնելու իրավունքով՝ սույն պայմանագրի շրջանակներում լիազորությունները երրորդ անձանց վերալիազորելու իրավունքով: Իր պարտավորությունները պատշաճ կատարելու համար Գործակալն իրավունք ունի Հաճախորդից պահանջելու սույն պայմանագրից բացի առանձին լիազորագիր տալ Գործակալի կամ նրա կողմից լիազորված անձի անունով:

8.2. Հաճախորդը հաստատում է, որ տեղեկացված է Հայաստանի Հանրապետություն բեռների ներմուծումը կարգավորող օրենսդրության և դրանից բխող պարտավորությունների մասին, ինչպես նաև գիտակցում է, որ մաքսային ձևակերպումների հետ կապված ծախսերը չեն ներառվում Գործակալի միջնորդավճարի մեջ:

8.3. Կողմերը հաստատում են, որ սույն Պայմանագրի բովանդակությունը լիովին արտացոլում է նրանց իրական մտադրությունները և ձեռք բերված պայմանավորվածությունները:

8.4. Սույն Պայմանագրի որևէ դրույթ անվավեր ճանաչվելու դեպքում մնացած դրույթները պահպանում են իրենց իրավական ուժը: Սույն Պայմանագրով չկարգավորված հարցերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

8.5. Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, (թարգմանված՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով) և ունի իրավական ուժ: Տարընկալումների դեպքում գերակայությունը տրվում է հայերենին: